ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱԿՈԲՅԱՆ ՆՈՐԱՅՐ ԷԴԻԿԻ

ՀԱՅ-ԱՄԵՐԻԿՅԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1914-1920 ԹԹ.

Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ
պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի
հայցման ատենախոսության սեղմագիր

Երևան – 2015

Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Կարապետյան Մ.Ս.

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր Վիրաբյան Ա.Ս.

պատմական գիտությունների թեկնածու Ավագյան Ք.Ռ.

Առաջատար կազմակերպություն՝ Հովհ. Թումանյանի անվան Վանաձորի պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2015 թ. մայիսի 12-ին, ժամը 14^{00}-ին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈՀ-ի 004 Հայոց պատմության մասնագիտական խորհրդում (հասցեն՝ 0019, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2015 թ. մարտի 23-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Մուրադյան Հ.Ղ.

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Հայ-ամերիկյան 1914–1920թթ. առնչությունների պատմությունը թեև հայ պատմագրության կողմից չի անտեսվել, բայց չի էլ ներկայացվել իր ամբողջության մեջ: Դրանց խորքային լուսաբանումը պայմանավորված է պատմագիտական ճշմարիտ հայեցակարգերի մշակման անհրաժեշտությամբ, ակադեմիական այնպիսի պատմագրության ստեղծմամբ, որը կգնահատի ԱՄՆ–ի դերը հիշյալ ժամանակահատվածում՝ զերծ մնալով ծայրահեղ մոտեցումներից: Այդ առնչությունների կամ հարաբերությունների պատմության մատուցմամբ կառանձնացվեն ԱՄՆ-ի մարդասիրական և քաղաքական դերակատարությունները հայության նկատմամբ, որոնք ցայսօր ներկայացվում են միախառնված, առանց հստակ սահման մտցնելու հայության նկատմամբ այս պետության և նրա ներկայացուցիչների մարդասիրական քայլերի և քաղաքական մոտեցումների մեջ:

Այսօր ծայրահեղ դրական է գնահատվում մասնավորապես Վուդրո Վիլսոնի դերը հայության ճակատագրում:

Այն հանգամանքի ապացուցումը, որ Վիլսոնն իսկապես լինելով հայասեր, նախ և առաջ հետամուտ էր իր իսկ պետական շահերին, որոնցից ելնելով Սենատը մերժեց Հայաստանի մանդատը, շատ կարևոր է և ունի արդիական նշանակություն, քանի որ ներկայումս նույնպես մեծ տերությունները իրենց նպատակների համար շահարկում են Հայկական հարցը, երբ այն պետք է լինում ծառայեցնել իրենց քաղաքական շահերին և մտցնել այն փակուղի, երբ հակասում է դրանց:

Թեման արդիական է նրանով, որ կնպաստի այս առնչությունների պատմության դասերով մեծ տերությունների և նաև ԱՄՆ-ի ներկայիս քաղաքականության նկատմամբ ճիշտ դիրքորոշման մշակմանը, այն հայեցակարգի ամրապնդմանը, որ նրա քաղաքականությունն այժմ էլ գրեթե չի փոխվել:

Ատենախոսության նպատակն ու խնդիրները: Ատենախոսության նպատակն է բացահայտել հայ-ամերիկյան առնչությունների պատմությունը 1914–1920 թթ.: Դրանք մենք ներկայացրել ենք երկու փուլով՝ 1. հայ-ամերիկյան առնչությունները 1914-1916թթ.–ին և 2. հայ-ամերիկյան հարաբերությունները 1918–1920թթ.–ին: Տեղին ենք գտել նաև փոքրիկ պատմական ակնարկով դրանք ներկայացնել իրենց սկզբնավորման պահից: Այն տեսակետն ենք զարգացրել, որ միսիոներական շարժումը հայության նկատմամբ մինչև 1895–96թթ. առաջին մասսայական ջարդերը կրում էին կրթական և լուսավորչական, իսկ այդ շրջանից մինչև 1914թ.–ը՝ նաև մարդասիրական բնույթ:

Ատենախոսության հաջորդ կարևորագույն խնդիրը եղել է ԱՄՆ–ի վերաբերմունքի բացահայտումն ու լուսաբանումը Թուրքիայի և նրա կողմից իրականացված հայոց ցեղասպանության նկատմամբ 1914–15թթ.– ին:

Մեր որդեգրած հաջորդ խնդիրն է եղել հիմնական կողմերով վերլուծության ենթարկել դեսպան Մորգենթաուի, ամերիկյան հյուպատոսների և

միսիոներների հայանպաստ գործունեությունը հայերի զանգվածային ջարդերի պայմաններում:

Ատենախոսության հետապնդած հաջորդ կարևորագույն խնդիրը հանդիսացել է հայ-ամերիկյան փոխհարաբերությունների բացահայտումը 1918–20թթ.–ին, որի ընթացքում գոյատևեց Հայաստանի առաջին Հանրապետությունը և այդ գոյատևմանը քիչ չնպաստեցին ամերիկյան մարդասիրական ընկերությունները: Մեր խնդիրն է եղել ապացուցել, որ թե այդ կազմակերպությունների, թե Հուվերի և Հասկելի գործունեությունն ավելի շատ ունեցել է մարդասիրական նկարագիր, և նրանք գրեթե չեն խառնվել քաղաքական բնույթի խնդիրներին:

Մեր առաջ դրված խնդիրներից է նաև եղել հայ-ամերիկյան քաղաքական հարաբերությունների բացահայտումը, հարաբերություններ, որոնք ի հայտ եկան այն ժամանակ, երբ ԱՄՆ–ը փորձեց ստանձնել Հայաստանի մանդատը:

Ատենախոսության գիտական նորույթը: Ատենախոսությունը պատմագիտական նոր գնահատականներ է տալիս հայ-ամերիկյան առնչություններին իր ուսումնասիրության առարկա ժամանակահատվածում: Բազմաթիվ նոր փաստաթղթեր շրջանառության մեջ դնելով այնտեղ փորձ է արված ապացուցել միսիներական շարժման խորքային նպատակները, հիմնավորել, որ ԱՄՆ–ի կողմից այդ առնչությունների հիմքում գլխավորապես ընկած են եղել մարդասիրական ձգտումները, իսկ դրանք չէին կարող նպաստել հօգուտ Հայաստանի կամ հայ ժողովրդի կտրուկ միջամտության, քանի որ այդ միջամտությունը չէր բխում ԱՄՆ–ի քաղաքական շահերից:

Ատենախոսության մեթոդական սկզբունքները: Ատենախոսությունը շարադրելիս առաջնորդվել ենք արխիվային վավերագրերի, փաստաթղթերի, մամուլի և գրականության պատմաքննական մեթոդով, ինչը հնարավորություն է տալիս անցած պատմական իրադարձությունները ենթարկել տեսական ընդհանրացման: Ատենախոսության մեթոդաբանական հիմքում ընկած է պատմական ճշմարտությունը, անաչառությունը և անկողմնակալությունը:

Ատենախոսության փորձաքննությունը: Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել Երևանի Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի Հայ ժողովրդի պատմության ամբիոնի կողմից: Նրա հիմնական դրույթները մատուցվել են հեղինակի հրատարակած 5 հոդվածներում:

Ատենախոսության կիրառական նշանակությունը: Աշխատությունն ունի պատմա-ճանաչողական կարևոր նշանակություն, որի արդյունքները կարող են օգտագործվել ոչ միայն Հայաստանի նորագույն շրջանի պատմության, նորանկախ պետականության կայացման ճանապարհին պատմության դասերի ճիշտ ընկալման վրա հիմնված քաղաքականության ընտրության համար, այլև՝ բուհական և դպրոցական դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ շարադրելիս:

Հիմնահարցի աղբյուրագիտական հիմքն ու ուսումնասիրվածության աստիճանը: Հայ-ամերիկյան 1914–20թթ. հարաբերությունների վերաբերյալ առկա են բազմաթիվ հրատարակված և չհրատարակված սկզբնաղբյուրներ,

գիտական ուսումնասիրություններ, հուշագրություններ և պարբերական մամուլի նյութեր, որոնց ուսումնասիրության ճանապարհով ստեղծվել է սույն ատենախոսությունը: Թեմային առնչվող բազմաթիվ սկզբնաղբյուրներ են պահված Հայաստանի Ազգային Արխիվում, որոնք առնչվում են հայ-ամերիկյան հարաբերությունների տարբեր՝ քաղաքական, մարդասիրական, կրթական և այլ ոլորտներին[1]: Այս նյութերից առավել նախընտրելիները, բնականաբար, մենք օգտագործել ենք մեր ատենախոսության շարադրման ընթացքում: Քիչ չեն նաև թեմային առնչվող պարբերական մամուլի նյութերը, որոնք իրենց նշանակությամբ գրեթե հավասար են արխիվային սկզբնաղբյուրներին: Այդ նյութերից ևս նպատակային կերպով օգտագործել ենք մեր ուսումնասիրության մեջ[2]:

Ատենախոսության ստեղծման երրորդ կարևոր հիմք ծառայել են հրատարակված սկզբնաղբյուրները: Արևմտահայության ցեղասպանության մասին ամերիկյան միսիոներների, հյուպատոսների և Թուրքիայում գտնվող այլ պաշտոնական անձանց տեղեկագրերը, վկայությունները և այլ գրություններն է ամփոփում Ա.Սարաֆյանի հրատարակած ժողովածուն[3]: Բազմաթիվ այս վավերագրերը նույն Ա. Սարաֆյանը լույս է ընծայել նաև այլ հրատարակություններով[4]:

Դրանցում ամերիկյան ներկայացուցչությունների զեկուցագրերը հետապնդում էին ԱՄՆ-ի վարչակարգի ուշադրությունը այս աննախադեպ իրադարձությունների վրա սևեռելու խնդիրը և հասնել հօգուտ հայոց միջամտության:

Բացի այդ, դրանցում ցույց էր տրվում, որ հայ ժողովրդի նկատմամբ իսկապես որդեգրվել է մասսայական կոտորածների քաղաքականություն և հասնել նրան, որ մարդասիրական օգնություն ցուցաբերվի տեղահանված հայերին[5]:

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 114, ց. 2, գ. 431, ց. 4, գ. 304, ց. 2, գ. 171, ց. 2, գ. 174, ց. 1, գ. 304, ց 1, գ. 439, ց. 1, գ. 431, ց. 2, գ. 143, ց, 1, գ. 438, ց. 1, գ. 514, ց 1, գ. 395, ց. 2, գ. 37, ց. 2., գ. 8, ց 1, գ 395, ֆ. 205, ց. 1, գ. 634. ց. 1, գ. 636, ց. 1, գ. 563 ,ֆ. 122, ց. 1, գ. 349, ց 1, գ. 328 և այլն:

[2] Տե՛ս «Աշխատանք», թիվ 17, հունիսի 26, 1917, թիվ 3, մայիսի 10, 1917,թիւ 10, հունիսի 3, 1917, «Համբավաբեր», թիւ 5, փետրվարի 5, 1917, «Ասպարեզ», թիւ 483, նոյեմբերի 9, 1917, թիւ 488, դեկտեմբերի 14, 1917, «Հորիզոն», թիվ 197, սեպտեմբերի 3, 1916, թիվ 257, նոյեմբերի 16, 1916, «Վան - Տոսպ», թիւ 51, նոյեմբերի 13, 1916, «Գաղափար», թիւ 83, հոկտեմբերի 12, 1916 և այլն:

[3] Տե՛ս Ամերիկայի Միացյալ Նահանգների պաշտոնական վավերագրերը հայոց ցեղասպանության մասին, կազմող՝ Արա Սարաֆյան, թարգմանություն՝ Հասմիկ Հայրապետյանի, Երևան, 2004:

[4] Տե՛ս United States Official Documents on the Armenian Genocide, Compited and introduced by Ara Sarafian, volume I, The Lower Euphrates, Armenian Review, Watertown, Massachusetts, 1993, նույնը, The peripheries Massachusetes, 1994, նույնը, volume III, Massachusetts, 1995.

[5] Այս նույն նպատակն է հետապնդում նաև Լեսլիի ժողովածուն, տե՛ս Девис А. Лесли, Провинция бойни, доклад американского дипломата об Армянском геноциде, 1915-1917 гг., Ереван, 2000, ст. 203-260.

Հայկական ցեղասպանությանն առնչվող ամերիկյան գործիչների վավերագրեր են հրատարակվել նաև Մ. Ներսիսյանի խմբագրած հայտնի ժողովածուում[6]:

Ոչ պակաս գնահատելի սկզբնաղբյուրային նշանակության նյութեր է հրատարակել նաև Գ. Լազյանը, որոնք թեպետ վերցրել է այլ աղբյուրներից, սակայն ժամանակին դրանց անմատչելիությունը հիմք էր հանդիսանում դրանց՝ որպես կարևոր սկզնաղբյուրների օգտագործման համար[7]:

Հայկական, ապա՝ Մերձավոր Արևելքի Նպաստամատույց Կոմիտեի հայանպաստ գործունեության վերաբերյալ անչափ գնահատելի սկզբնաղբյուր է հրատարակել այդ հաստատության ղեկավար Ձ. Բարտոնը[8]:

Այս հատորից մենք տեղեկանում ենք այն վիթխարի մարդասիրական օգնության մասին, որ ցուցաբերել է Ձ. Բարտոնի կազմակերպությունը հայության նկատմամբ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին և նաև դրանից հետո՝ հանրապետության շրջանում:

Հայ-ամերիկյան 1917–1921թթ. տարաբնույթ փոխհարաբերությունների վերաբերյալ խիստ արժեքավոր սկզբաղբյուր է Գ. Մախմուրյանի կազմած ժողովածուն[9]:

Այս ժողովածուն ներառում է ԱՄՆ դեպարտամենտի բազում փաստաթղթեր, որոնք առնչվում են հայ ժողովրդին, նրա նկատմամբ ցուցաբերված մարդասիրական օգնությանը, մեծ տերությունների՝ Հայաստանի Հանրապետության նկատմամբ վերաբերմունքին, Հայկական Հարցի նկատմամբ ԱՄՆ դիրքորոշմանը և այլն:

Հայոց ցեղասպանության մասին առատ վավերաթղթերով ժողովածու է հրատարակել Հ. Սասունյանը[10]:

Հիմնահարցի վերաբերյալ կան նաև հրատարակված հուշագրական բնույթի գործեր, որոնցից հատկապես կուզենայինք առանձնացնել Կ. Պոլսում ԱՄՆ դեսպան Մորգենթաուի հուշերը: Մեր ատենախոսությունը պատրաստելիս մենք օգտագործել ենք նրա հուշերի հայերեն թարգմանությունը[11]:

Մորգենթաուի հուշերը հետաքրքիր են մի քանի տեսանկյունից: Նախ, լինելով ԱՄՆ–ի դեսպանը երիտթուրքերի կողմից արևմտահայության ցեղասպանության ծրագրման և իրականացման շրջանում՝ նա կարևոր տեղեկություններ է հաղորդում այդ մասին, քանի որ իր անձնական շփումների և զրույցների ներկայացմամբ բացահայտում է այն խորքային գործընթացները,

---

[6] Геноцид армян в Османской Империи, сборник документов и материалов под редакцией М. Р. Нерсисяна, второе, дополненное издание, Ереван, 1983.

[7] Տե՛ս Լազեան Գ., Հայաստան եւ Հայ Դատը հայեւռուս յարաբերութիւններու լոյսին տակ, Երևան, 1991:

[8] Տե՛ս Barton James L., Story of Near East Relief (1915-1930), New York, 1930.

[9] Տե՛ս Հայաստանը ԱՄՆ պետական դեպարտամենտի 1917–1921թթ. փաստաթղթերում, կազմող Մախմուրյան Գ., Армения в документах Государственного департамента США 1917-1920гг., составитель Г. Г. Махмурян, Ереван, 2011.

[10] The Armenian Genocide, Dokuments and Declarations, 1915-1995, complited and by H. Sassounian, Glendale,1992.

[11] Ամերիկյան դեսպան Հենրի Մորգենթաուի հուշերը եվ հայկական եղեռնի գաղտնիքները, թարգմանիչ Ենովք Արմեն, Երևան, 1990:

որոնք իրականացվում էին Թուրքիայում՝ հայության նկատմամբ: Երկրորդ կարևորությունը կայանում է նրանում, որ Մորգենթաուն ուշագրավ տեղեկություններ է հաղորդում Թուրքիա-Գերմանիա փոխհարաբերությունների, հայոց ջարդերի նկատմամբ Գերմանիայի վերաբերմունքի, որն արտահայտվում էր դեսպան Վանգենհայմի միջոցով, Դաշնակիցների հակասական քաղաքականության, հայոց ողբերգության նկատմամբ ԱՄՆ–ի իշխանությունների որդեգրած դիրքորոշումների մասին:

Ա. Խատիսյանի հատորը կարելի է գնահատել երկու արժանիքներով՝ որպես հուշագրային բնույթի սկզբնաղբյուր և միաժամանակ վերլուծական ուսումնասիրություն[12]:

Ա. Խատիսյանի գրքում կարևոր տեղեկությունների կարելի է հանդիպել ինչպես Հասկելի ծավալած գործունեության, այնպես էլ նաև Հարբորդի Հայաստան առաքելության մասին, որը տեղի ունեցավ իր վարչապետության շրջանում: Գնահատելի են նաև Ա. Խատիսյանի այն տեղեկությունները, որոնք վկայում են, որ ամերիկյան շատ նշանավոր դեմքեր, այդ թվում Հարբորդը և Բրիստոլը հասկացնում էին, որ պետք չէ հույսը դնել Դաշնակիցների ու ԱՄՆ–ի վրա և ճիշտ կլինի, եթե հայերը լեզու գտնեն թուրքերի հետ՝ համաձայնվելով ավելի նեղ սահմաններով Հայաստանի գոյությանը: Նրա այդ վկայություններն ունեն արդիական նշանակություն:

Ս. Վրացյանը, Հայաստանի Հանրապետության վերջին վարչապետն, ի տարբերություն Ա. Խատիսյանի, իր աշխատությունը շարադրել է վերլուծական ոճով, չի ներկայանում որպես հուշագիր, այլ տալիս է ՀՀ ամբողջական պատմությունն սկզբից մինչև անկումը՝ ներկայացնելով իր հայեցակարգային մոտեցումները այս կամ այն իրադարձության վերաբերյալ[13]:

Ս. Վրացյանը բավական մանրամասնորեն խոսում է ԱՄՆ–ի կողմից Հայաստանին ցուցաբերած մարդասիրական մեծ օգնության մասին, որի հետևանքով հայ ժողովուրդը փրկվեց վերջնական կործանման վտանգից, մասնավորապես 1918–1919թթ.–ի դժնդակ տարիներին:

Ս. Վրացյանն անդրադառնում է նաև Հասկելի գործունեությանը, Հարբորդի առաքելությանը, ԱՄՆ–ի կողմից Հայաստանի մանդատի ստանձնման փորձին և դրա ձախողմանը:

Հայ-ամերիկյան առնչություններին լայն տեղ է հատկացված Ե. Քասունու աշխատության մեջ[14]:

Աշխատությունը նվիրված է հայ ավետարանական շարժմանը՝ սկսած իր սկզբնավորման շրջանից (19–րդ դարի 20–30-ական թթ.), զարգացման որոշակի փուլերով: Ե. Քասունին բավական հստակ տեղեկություններ է հաղորդում այս շարժման նպատակների, ծավալման շրջանների և գործունեության ուղղվածությունների մասին:

---

[12] Տե՛ս Խատիսեան Ա., Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Բէյրութ, 1968:

[13] Տես Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, Բէյրութ, 1958:

[14] Տե՛ս Տեր Եղիա Ս. Քասունի, Լուսաշաւիղ պատմութիւն հայ ավետարանական շարժման, 1846-1946, Պէյրութ, Լիբանան, 1947:

Ամերիկյան միսիոներների գործունեությանն անդրադարձել է Ա. Ալպոյաճյանը[15]: Հատկապես հետաքրքիր են նրա պատճառաբանությունները, թե ինչու միսիոներական շարժումը ծավալվեց ավելի շատ Թուրքիայում և ոչ թե Ռուսաստանում, որոնք մենք քննարկել ենք մեր թեզում: Նա նույնպես տալիս է միսիոներների գործունեության նպատակն ու ուղղվածությունը, իհարկե, ոչ այնքան մանրամասնորեն:

Վերջիններիս տարած կրթական գործունեությանն անդրադարձել է Գ. Նազիկյանը[16]: Սակայն, նրա աշխատությունը զարգանում է այն տրամաբանությամբ, որ միսիոներները հետամուտ են եղել քաղաքական նպատակների: Չնայած դրան, նա ներկայացնում է Թուրքիայում այն շրջանները, որտեղ նրանք ծավալում են կրթական գործունեություն, որն արժանի է դրվատանքի:

Թեև Մ. Ճիզմեճյանի աշխատությունը նվիրված է ամերիկահայ քաղաքական կուսակցություններին[17], բայց նա չէր կարող չանդրադառնալ նաև հայ ազատագրական շարժման նկատմամբ ամերիկյան տարբեր քաղաքական և ոչ քաղաքական շրջանակների վերաբերմունքին: Հատկապես հետաքրքիր է նրա այն վկայությունը, որ միսիոներները դեմ են եղել հայ ազգային-ազատագրական պայքարին ընդդեմ Թուրքիայի:

Մասնավորապես առաջին հանրապետության շրջանի հայ-ամերիկյան հարաբերություններին լայն տեղ է հատկացված Ռիչարդ Հովհաննիսյանի աշխատությունում[18]:

Ռ. Հովհաննիսյանն իր աշխատության 2 հատորներում արխիվային տարաբնույթ նյութերի ուսումնասիրմամբ լուսաբանել է նաև ԱՄՆ քաղաքականությունը Մերձավոր Արևելքում, Անդրկովկասում, բացահայտել է նպաստամատույց կոմիտեների հայերին ցուցաբերած օգնությունը, Հասկելի, Հուվերի գործունեությունը, մի խոսքով բաց չի թողել որևէ հարց, որը վերաբերվել է հայ-ամերիկյան առնչություններին ՀՀ գոյության շրջանում: Բնականաբար չի անտեսել նաև Հայաստանի մանդատի ստանձման և ձախողման հարցերը:

Բավական հետաքրքիր մի հոդված է հրատարակել սփյուռքահայ հայտնի պատմաբան Զավեն Մսըրլյանը Հայկազյան Հայագիտական հանդեսում[19]: Հեղինակը ցույց է տալիս ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության մեջ Հայկական Հարցի դերի աստիճանական զարգացումը, երբ փաստորեն այն մարդասիրականից վերածվեց քաղաքականի, մասնավորապես Հայաստանի առաջին Հանրապետության տարիներին:

---

[15] Տե՛ս Ալպոյաճեան Ա., Պատմութիւն Եվդոկիոյ հայոց, Կահիրե, 1952:

[16] Տե՛ս Նազիկյան Գ., Արևմտահայ մանկավարժական միտքն ու դպրոցը, Երևան, 1969:

[17] Տե՛ս Ճիզմէճեան Մ., Պատմութիւն Ամերիկահայ քաղաքական կուսակցութեանց, 1890-1925, Ֆրեզնօ, 1930:

[18] Տե՛ս Hovhannisian R., Armen ia on the Road independence 1918, Berkeley – L. A. ,1967, The Republic of Armenia, v. 1–2, Berkeley–L. A., 1971–1982, v. 3–4, 1996, Հայաստանի Հանրապետություն, հ. 1, առաջին տարին, 1918–1919, Երևան, 2005:

[19] Մսըրլեան Զ., ԱՄՆ-ի արտաքին քաղաքականութիւնը և Հայկական Հարցը (1900-1976 թթ.), Հայկազեան Հայագիտական հանդես, Պէյրութ, 1977-1978, հ. Զ, խմբագիր Երուանդ Հ. Քասունի, Պէյրութ, 1977–78:

Խորհրդահայ պատմաբաններից հայ-ամերիկյան հարաբերություններին կամ ավելի ճիշտ կլինի՝ հայկական կոտորածների քաղաքականության նկատմամբ դեսպան Մորգենթաուի դիրքորոշումներին և ԱՄՆ պետական մոտեցմանն անդրադարձել է Ջոն Կիրակոսյանը[20]:

Մեր հետապնդած խնդրին սերտորեն առնչվում են նաև Գալուստ Գալոյանի աշխատությունները[21]:

Հեղինակն անդրադարձել է 1917-1923թթ. մեծ տերությունների Հայաստանի ունեցած դիրքորոշումներին, հետապնդած շահերին և նպատակներին, ինչպես նաև տարածաշրջանային հակասություններին, որոնք արգելք հանդիսացան Հայկական Հարցի լուծման համար:

Բնականաբար, նա ներկայացրել է նաև ԱՄՆ որդեգրած քաղաքական նպատակները, մասնավորապես 1917թ. ապրիլից հետո, երբ Թուրքիայի հետ մտավ պատերազմի մեջ: ԱՄՆ-ի ՀՀ նկատմամբ որդեգրած քաղաքականությանը թեև հատուկ չի անդրադառնում, բայց հայեցակարգային նոր մոտեցումների մշակման միտում է դրսևորում է. Ջոհրաբյանը մասնավորապես երեք աշխատություններում[22]:

Վերջին շրջանում Մերձավոր Արևելքի Ամերիկյան Նպաստամատույց Կոմիտեի գործունեության վերաբերյալ գնահատելի աշխատություն է ստեղծել Ս. Ռ. Ավետիսյանը[23]: Նրա առաջին գլխում մանրամասնորեն վերլուծության են ենթարկված Նպաստամատույց Կոմիտեի գործունեության ուղղությունները Հայաստանի առաջին Հանրապետության տարիներին:

Ատենախոսության կառուցվածքն ու բովանդակությունը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից: Ուսումնասիրության ընդհանուր ծավալը կազմում է համակարգչային շարվածքի 150 էջ:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆՈՒՄ հիմնավորված է թեմայի արդիականությունը, նպատակն ու խնդիրները, ներկայացված է ատենախոսության գիտական նորույթն ու գործնական նշանակությունը, մեթոդաբանական հիմքերը, ուսումնասիրվածության աստիճանը, տրվել է թեմային վերաբերող սկզբնաղբյուրների ու գրականության տեսությունը:

ԳԼՈՒԽ 1. ՀԱՅ-ԱՄԵՐԻԿՅԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1914–1916 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ: Բաղկացած է երկու ենթագլուխներից: Առաջինը վերնագրված է՝ **«ԱՄՆ-ի վարչակարգի դիրքորոշումը հայոց ցեղասպանության նկատմամբ»:** Այն սկսվում է հայ-ամերիկյան հարաբերությունների ակունքների

---

[20] Տե՛ս Կիրակոսյան Ջ., Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը, 1914-1916 թթ., Երևան, 1967:

[21] Տե՛ս Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները, 1917-1923թթ., Երևան, 1999:

[22] Տե՛ս Է. Ջոհրաբյան, 1920 թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները, Երևան, 1997, Նույնի՝ Նախիջևանյան հիմնահարցը և Հայաստանի «դաշնակիցները (1918թ. դեկտեմբեր -1920թ. ապրիլ), Երևան, 2002, Նույնի՝ Նախիջևանի հիմնահարցը, 1920-21, Երևան, 2010:

[23] Տես Ավետիսյան Ս., Մերձավոր Արևելքի Ամերիկյան նպաստամատույց Կոմիտեի (Ամերկոմ) գործունեությունը Հայաստանում(1918-1930թթ.), Երևան, 2009:

լուսաբանումից, որոնք սկզբնավորվել են բավականին բարդ պայմաններում, քանի որ այս ժամանակաշրջանում հայ ժողովուրդը զրկված էր պետականությունից և ԱՄՆ-ի կազմակերպությունների առաքելությունները, որոնք կրում էին կրոնական, կրթական կամ մարդասիրական բնույթ, ինքնին խրախուսելի չէր մահմեդական Թուրքիայի իշխանությունների կողմից:

Միսիոներները հաստատվելով Արևմտյան Հայաստանում ոչ մի քաղաքական նպատակ չէին հետապնդում: Ուստի և միանգամայն ճիշտ է Արշակ Չոպանյանը, գրելով, որ ամերիկյան միսիոներները Թուրքիա են ուղարկվել ոչ թե «հայ ժողովուրդը քարոզելու համար, այլ որպէսզի անոնց օգնէին գործադրել տալու այն անմիջական բարեփոխումները, որ ազգին մտաւորական եւ բարոյական զարգացման համար պէտք են»[24]:

Առաջին աշխարհամարտի սկզբնավորումով, և դրա ամբողջ ընթացքում էլ հայ-ամերիկյան հարաբերությունները ԱՄՆ-ի կողմից մնացին միայն մարդասիրական, իսկ մարդասիրությունը բավարար պատճառ չէր ռազմական միջամտության համար: Ստացվում էր, որ հայերի ցեղասպանությունը մնում էր Թուրքիայի ներքին գործը:

Քանի դեռ ԱՄՆ-ը պատերազմող կողմ չէր, միջամտությունը նաև օրինական չէր: ԱՄՆ-ի միջամտությունը տվյալ իրավիճակում չէր կարող լինել քաղաքական կամ ռազմական, այլ՝ բարոյական, որի պտուղները հազիվ շոշափելի եղան:

Ոչ ոք իրավունք չունի ժխտելու հայոց ցեղասպանությունը կանխելու ԱՄՆ շատ պետական գործիչների և Թուրքիայում նրա ներկայացուցիչների ցանկությունների անկեղծությունը, բայց նաև չպետք է մոռանալ, որ նրանք հանուն հայերի չպետք է անտեսեին սեփական երկրի քաղաքական շահերը:

Ամերիկայի հանրության բացասական կարծիքը որևէ կերպ չէր կարող կանխել երիտթուրքական ծրագրերը: Երիտթուրքերի համար «Եկած էր ժամանակը՝ Թուրքիան այլամերժօրեն Թիւրքերուն հայրենիքը դարձնելու»[25]:

Երկրորդ ենթագլուխը վերնագրված է՝ «Թուրքիայում ԱՄՆ դեսպանի, հյուպատոսների, միսոներների և հասարակական կազմակերպությունների հայանպաստ գործունեությունը»: Այն ներառում է Մորգենթաուի, հյուպատոսների, միսիոներների և այլ կազմակերպությունների հայանպաստ գործունեության վերլուծությունը:

ԱՄՆ-ի Թուրքիայի ներկայացուցիչները տեսնում էին հայերի նկատմամբ ծրագրավորվող քաղաքականությունը և ամեն կերպ ձգտում էին դրա կասեցմանը, մի բան, որն իրենց ուժերից վեր էր:

ԱՄՆ-ի հյուպատոսները կամ Թուրքիայում այլ ներկայացուցիչները ամենևին չէին ուզում քաղաքական խնդիրների հետամուտ լինել՝ խախտելով իրենց պետության չեզոքության պահանջները: Պարզապես նրանց միջամտությունն ուներ բարոյական և մարդասիրական ենթատեքստ:

Հայաստանում ստեղծված այդ ծանր վիճակի մասին բոլոր գրությունները Մորգենթաուն ուղարկում էր ԱՄՆ-ի պետքարտուղարություն, բայց միևնույն է՝

[24] «Անահիտ», թիւ 2, Փարիզ, 1905, էջ 41:
[25] Նույն տեղում, էջ 243:

ԱՄՆ-ը երբեք չէր դիմում կտրուկ քաղաքական կամ ռազմական միջամտությունների:

Մորգենթաուի կոչի վրա միսիոներների, բարեգործների, արդյունաբերողների և հայտնի մանկավարժների մի խումբ ստեղծում է Հայկական կոմիտեն, որի նախագահ է դառնում Ջեյմս Բարտոնը: Այն կոչվում էր Armenian Relief Committee ABC[26]: Այս կոմիտեն հետագայում կոչվեց Հայկական Նպաստամատույց Կոմիտե: Այն արագորեն հավաքում է 100.000 դոլար, որպես նպաստ, որը պետք է բաշխեին Կ. Պոլսի և Սիրիայի ամերիկյան պաշտոնյաները:

Անհրաժեշտ է շեշտել, որ թե՛ այս և թե՛ այլ կազմակերպությունները չափազանց զգույշ են եղել թուրքական իշխանությունների նկատմամբ վերաբերմունքի հարցում և զերծ են մնացել հակաթուրքական որևէ քարոզչությունից: Հասկանալի է դարձյալ, որ նրանք առաջնորդվել են զուտ մարդասիրական նպատակներով:

Ցեղասպանությունից փրկված հայերին նյութական աջակցություն ցուցաբերելու նպատակով բավական արդյունավետ աշխատանքներ են տանում Հայկական և Սիրիական նպաստամատույց կոմիտեները, որը հետագայում գործեց Մերձավոր Արևելքի Ամերիկյան Նպաստամատույց Կոմիտե (ACRNE–ՄԱԱՆԿ) անունով, որը ծրագրել էր հավաքել 30 մլն. դոլար[27]: Հայկական նպաստամատույց կոմիտեի աշխատանքները շարունակվում են մինչև Հայաստանի առաջին Հանրապետության գոյության շրջանը:

Հայերի նկատմամբ ամերիկացիների մարդասիրական գործունեությունը շարունակվեց նաև հետագայում, Հայաստանի առաջին Հանրապետության տարիներին, այն տարբերությամբ միայն, որ այն կրեց նաև պետական բնույթ:

ԳԼՈՒԽ 2. ՀԱՅ-ԱՄԵՐԻԿՅԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1918-1920 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ: Բաղկացած է երկու ենթագլխից, որից առաջինը կրում **է «Մերձավոր Արևելքի Ամերիկյան Նպաստամատույց Կոմիտեի և Հ. Հուվերի Ամերիկյան Նպաստամատույց Վարչության գործունեությունը»** վերնագիրը:

Երբ 1918թ. վերջերին ավարտվեց Առաջին համաշխարհային պատերազմը, և Մուդրոսի զինադադարով Թուրքիան կապիտուլացիայի ենթարկվեց, ԱՄՆ - ի օգնությունն առավել ծավալուն նկարագիր ստացավ:

Արդեն 1919թ. հունվարին ՄԱԱՆԿ-ը Մերձավոր Արևելք և Կովկաս է ուղարկում առաջին նավաբեռները, ինչպես նաև վարչական և բժշկական աշխատողներ: Կոմիտեի նախագահ Բարտոնը հատուկ հանձնախմբով փետրվարին ժամանում է Կ. Պոլիս ճշտելու տեղի կարիքները: Մինչև 1919թ. ամռան վերջը հիշյալ կոմիտեն, որը օգոստոսին Կոնգրեսի ակտով գրանցվում է որպես Մերձավոր Արևելքի նպաստամատույց (NER – ՄԱՆ), Մերձավոր Արևելք – Կովկաս է ուղարկել ավելի քան 30.000 մետրիկական տոննա պարենամթերք և հագուստեղեն՝ ավելի քան 9 մլն. դոլարի արժողությամբ: Ռ. Հովհաննիսյանը ճիշտ ընդհանրացնում է կատարում «Ամերիկյան այս վիթխարի բարեսիրական արշավանքում պաշարների այն փոքր շիթը, որը հասավ Հայաստան, նեցուկ

[26] Տե՛ս Barton J., Story of Near East Relief (1915-1930), New York, 1930, p. 7.
[27] Barton J., նշվ. աշխ., p. 209:

դարձավ Հանրապետությանը՝ գոյատևման հույսով ավելի պայծառ երկրորդ տարվա համար»[28]:

Մեր տրամադրության տակ գտնվող մի փաստաթուղթ օգնում է ենթադրելու, որ Մերձավոր Արևելքի նպաստամատույցը իր մարդասիրական առաքելության ընթացքում իր տրամադրության տակ է ունեցել նաև զինվորներ (դրանցից էր նաև Թելֆորդը, որը փոխգնդապետ էր): Վերջիններիս ուղարկել էր Հուվերը, որը համագործակցում էր հիշյալ կոմիտեի հետ: Փաստաթուղթը թվագրված է «Հոկտեմբեր 19, 1919, 4:14 AM»:

ՄԱՆ-ը հարկ եղածն անում էր հայությանը համակողմանի մարդասիրական օգնություն ցուցաբերելու առումով, առանց քաղաքական նպատակների: Այն օրհասական օրերին նպաստեց հայապահպանությանը, որը վեր էր Հայաստանի նորաստեղծ պետության ուժերից:

Գերմանիայի հետ զինադադարից հետո ԱՄՆ պարենամթերքի վարչությունը նավերով բեռներ է առաքում Եվրոպական ափեր, և Ֆրանսիա է ուղարկվում հետպատերազմյան նպաստամատույց վարչության (American Relief Administration - ARA) ղեկավար Հերբերտ Հուվերը:

Ընդհանուր առմամբ, մինչեւ 1919թ. վերջը ամերիկյան կառավարության և մասնավոր կազմակերպությունների հայ ժողովրդին պարենով կատարած օգնությունը կազմել է ավելի քան 20 մլն. դոլարից ավել, իսկ ավելի կոնկրետ՝ 20.231.000[29]:

Թե՛ ԱՆՎ-ի և թե՛ ՄԱԱՆԿ-ի օգնությունը համակարգում էր Հերբերտ Հուվերը:

Ամերիկյան մարդասիրական օգնությունը մեղմացնելով և գրեթե վերացնելով սովահարության ստույգ վտանգը, նպաստեց նրան, որ կառավարությունն արդեն ձեռնամուխ եղավ երկրի վերաշինության և պետության կառուցման գործին:

Երկրորդ ենթագլուխը վերնագրված է **«Հասկելի գործունեությունը և դրա ուղղվածությունները»:**

Փաստերը վկայում են, որ Հասկելը մեծամասամբ քաղաքական միջամտությունների առումով եղել է զուսպ, իսկ ապա արդեն չեզոք դիրք է գրավել, մանավանդ, երբ Թուրքիայում ձևավորվեց միլլի (ազգայնական) շարժումը՝ Քեմալի գլխավորությամբ:

Հասկելը իր դանդաղ գործունեությամբ ավելի շատ նպաստում էր, որ Հայաստանում իշխի մահմեդական տարրերի նկատմամբ «համբերության և նախապատրաստական» քաղաքականությունը, որն իր ավարտը գտավ Բյուրո-կառավարության ստեղծումով 1920թ. մայիսի 5-ից հետո, բայց արդեն բավականին լրջորեն խարխլվել էին ՀՀ գոյության հիմքերը:

Համաձայն Ռուբենի վկայության՝ Հասկելը բարոյական ներգործություն է ունենում դեպի Զարիշատ հանրապետության զորքերի արշավանքի առումով, որը դրական ավարտ է ունենում[30]:

---

[28] Հովհաննիսյան Ռ., Հայաստանի Հանրապետություն, հ. 1, Առաջին տարի, 1918-1919, Երևան, 2005, էջ 146:

[29] «Հայկական Հարց», հանրագիտարան, Երևան, 1896, էջ 33:

[30] Տե՛ս Ռուբէն, նշվ. աշխ., հ. Է, էջ 246–249:

Վերջինիս գործունեությունը Հայաստանում սկսում է փակուղի մտնել 1920թ. մայիսյան խռովություններից հետո:

Նրա քաղաքական և ռազմական գործառույթները հստակորեն մատնանշված չէին, քանի որ ձգձգվում էր Հայաստանի մանդատի հարցը:

Այնպես, որ Հասկելի Հայաստանում ունեցած դերակատարությունը իր արդյունքը տվել է միայն հումանիտար կամ մարդասիրական օգնությունների առումով և այս ուղղությամբ նրա գործառույթներն էին հիմնականում որոշակի: Այսպիսով՝ Առաջին. Հայաստանի, ապա՝ Անդրկովկասի գերագույն կոմիսար Հասկելի գործունեությունը ամենևին զերծ չի եղել քաղաքական նպատակադրումներից, բայց դրանք հնարավոր չի եղել կյանքի կոչել, քանզի որպես կոմիսար նա չի ունեցել ամենաանհրաժեշտ լծակը՝ զինվորական ուժը:

Երկրորդ. Նա հստակ դիրքորոշում չի ունեցել հարավկովկասյան երեք հանրապետությունների տարածքային վեճերի հարցում, քանզի հստակ ցուցում չի ունեցել Վեհաժողովից և սեփական վարչակարգից:

Երրորդ. Այս պայմաններում նա գործել է հիմնականում մարդասիրական սկզբունքներից ելնելով՝ արդյունքում անուրանալի դեր կատարելով սովահար Հայաստանի և իր բնակչության սոցիալ-տնտեսական դրության բարելավման ուղղությամբ:

Հասկելի քաղաքական գործունեությանը կաշկանդող գլխավոր պատճառը ԱՄՆ-ի կողմից Հայաստանի մանդատի ստանձման ձգձգումն էր և ապա՝ մերժումը սենատի կողմից, որին նախորդեց Հարբորդի առաքելությունը Հայաստան:

ԳԼՈՒԽ 3. ԱՄՆ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆԴԱՏԻ ՍՏԱՆՁՄԱՆ ՓՈՐՁԻ ՁԱԽՈՂՈՒՄԸ: Այս գլուխն ամբողջությամբ նվիրված է ԱՄՆ–ի կողմից Հայաստանի մանդատի ստանձման և ձախողման գործընթացին՝ իր ողջ պատճառահետևանքային կապի մեջ:

Վիլսոնը մանդատի ստանձնումը կախյալ էր համարում Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի դիրքորոշումից, ինչպես նաև Ռուսաստանի և Գերմանիայի վերաբերմունքից: Թերևս նա գիտեր, որ այն մերժվելու է, բայց ըստ երևույթին չէր ցանկանում կորցնել մարդասերի իր կերպարի նկատմամբ հայության աննկուն համոզմունքը: Բացի այդ, արդեն գիտեր, որ գալիք ընտրություններում պարտվելու է, ուրեմն ինչու խաթարեր այդ կերպարը:

Ամերիկացիների համար վերջնականապես պարզ էր, որ ռուսները և թուրքերը Հայաստանի նկատմամբ մշակված ծրագիր են իրականացնում, ինչը հայ ղեկավարությունը տակավին լրջորեն չէր պատկերացնում: Չէր պատկերացնում, որ ստեղծված պայմաններում անզոր է ԱՄՆ–ը, որն, ինչպես վերևում համոզվեցինք, ամենևին չի ցանկանում միջամուխ լինել մի խնդրի, որը կարող էր նրա համար ավելորդ գլխացավանք առաջացնել: Այդ ցանկությունն իսպառ բացակայեց 1920թ. օգոստոսի հայ–ռուսական համաձայնագրի նախագծից հետո, որով ՀՀ–ն խորհրդայնացվեց:

Մի բան ակնհայտ է, որ ԱՄՆ–ը և Դաշնակիցներն սպառել էին իրենց գործնական աջակցությունը հօգուտ Հայկական հարցի լուծման, և արդեն նրանց հայտարարություններն հօգուտ Հայաստանի կրում էին ծիսական բնույթ:

Այդ ծիսականությունն ավելի է զգալի դառնում ՀՀ խորհրդայնացումից հետո: 1920թ. նոյեմբերի 22–ին, իր հեռանալուց առաջ, Վիլսոնը կայացրեց իր քաղաքական վճիռը, Սևրի պայմանագրի՝ իրեն տված իրավական հիմքով, գծելով Հայաստանի քարտեզը: Սակայն, այսօրվա հեռավորությունից այն պետք է դիտարկել ավելի շատ մարդասիրական, քանի որ այդ օրերին արդեն վճռված էր հայոց ճակատագիրը՝ Հայաստանը բաժանվում էր քեմալականների և բոլշևիկների միջև: Իսկ ինչ էր այն ներկայացնում իրենից: Վիլսոնի գծած սահմաններով, Արևելյան Հայաստանը, որն ուներ 71.330 քառ. կմ տարածություն, իրեն միավորելու էր Արևտյան Հայաստանից 90.000 քառ կմ տարածություն, որով ՀՀ սահմանը կազմելու էր 161.330 քառ. կմ[31]:

Ահա այսպիսի սահմաններով Հայաստան էր նախատեսում ստեղծել Վիլսոնը, որոնցով ժամանակին անչափ ոգևորվել էին հայ շատ քաղաքական գործիչները և ցայսօր էլ շատերը մնում են ոգևորված: Չիրականանալու պատճառներն արդեն մատնանշեցինք:

Վիլսոնի հաջորդ Հարդինգի հայանպաստ հայտարարություններն ևս ծիսական բնույթ էին կրում: Այսպես, 1921թ. մայիսի 30–ին նա հետևյալն է հայտարարում. ,Ես դեռևս կողմնակից եմ Հայաստանի անկախության. ամերիկյան ժողովուրդը և կառավարությունը հնարավորը կանեն Հայաստանի վերաշինության համար[32]:

Ինչ անկախության մասին կարող էր արդեն խոսք լինել, երբ արդեն ճնշված էր փետրվարյան ապստամբությունը և կանխորոշված Հայաստանի ճակատագիրը. նա վերջնականապես խորհրդայնացված էր և բաժանված 1921թ. մարտի 16–ի Մոսկվայի պայմանագրով:

Նույնը պետք է պնդել նրա 1921թ. նոյեմբերի 26–ի հայտարարության մասին՝ կապված Կիլիկիայի հայության հետ: Նա հայտնում է, որ Կիլիկիայի հարցը պետքարտուղար Հյուզի ուշադրության տակ է և հավաստիացնում, թե տեղի հայերը զինվորական պաշտպանություն կստանան[33]: Սա կնշանակեր հանդես գալ Թուրքիայի դեմ, որին նույն թվականի հոկտեմբերի 20-ի պայմանագրով Ֆրանսիան թողնում էր Կիլիկիան, ընդ որում ճանաչելով Մուստաֆա Քեմալի գլխավորած կառավարությունը (Թուրքիայի Ազգային Մեծ Ժողովը – ԹԱՄԺ -ն) և հրաժարվում էր նրա դեմ հետագա պայքարից[34]:

Այս պայմաններում ինչու պետք է իր հարաբերությունները Թուրքիայի հետ սրեր ԱՄՆ–ը:

Վերջապես արդեն Լոզանի կոնֆերանսում միանգամայն վերացավ ԱՄՆ–ի Հայաստանի նկատմամբ ունեցած դիրքորոշման ծխածածկույտը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՈՒՄ առանձնացված են այն հիմնական հայեցակետերը, որոնք փաստերի համադրական վերլուծության ճանապարհով հիմնավորվել են ատենախոսության մեջ:

---

[31] Լազեան Գ., Հայաստան եւ Հայ Դատը, հայևռուս յարաբերութիւններու լոյսին տակ, էջ 215, նաև՝ Խուրշուդյան Լ., Հայկական Հարցը, Երևան, 1995, էջ 49:

[32] American Committee Opposed to the Lausanne Treaty, The Lausanne Treaty, Turkey and Armenia, New York, 1926, էջ 211:

[33] Նույն տեղում:

[34] Ներսիսեան Ա., Մովսէս Տէր Գալուստեան, Երեւան, 2011, էջ 126:

Դրանք ներկայացված են երկու փուլով՝ 1. հայ-ամերիկյան առնչությունները 1914-1916թթ.–ին և 2. հայ-ամերիկյան հարաբերությունները 1918–1920թթ.–ին: Մինչև այդ՝ տեղին ենք համարել պատմական շրջայցը դեպի հայ-ամերիկյան առնչությունների սկզբնավորումը, որի ընթացքում փորձել ենք նաև նոր մոտեցումներ ներկայացնել այդ շարժման հետապնդած նպատակների և խնդիրների վերաբերյալ: Այն տեսակետն է զարգացվել, որ միսիոներական շարժումը հայության նկատմամբ մինչև 1895–96թթ. առաջին մասսայական ջարդերը կրում էր կրթական և լուսավորական, իսկ այդ շրջանից մինչև 1914թ.–ը՝ նաև մարդասիրական բնույթ:

Ատենախոսության հաջորդ կարևորագույն խնդիրը եղել է ԱՄՆ–ի վերաբերմունքի բացահայտումն ու լուսաբանումը Թուրքիայի և նրա կողմից իրականացված հայոց ցեղասպանության նկատմամբ 1914–15թթ.– ին: Փաստական առատ նյութի ուսումնասիրության արդյունքում այն տեսակետն է հիմնավորված, որ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Թուրքիայի կողմից իրականացրած հայոց ցեղասպանության նկատմամբ ԱՄՆ-ի վարչակարգը չի ունեցել հստակ դիրքորոշում, նրա արձագանքները չեն կրել քաղաքական բնույթ և չեն եղել նույնիսկ կտրուկ միջամտության սպառնալիքներ:

Ատենախոսության հաջորդ խնդիրն է եղել հիմնական կողմերով վերլուծության ենթարկել դեսպան Մորգենթաուի, ամերիկյան հյուպատոսների և միսիոներների հայանպաստ գործունեությունը հայերի զանգվածային ջարդերի պայմաններում: Այդ վերլուծությունների արդյունքում մենք հանգել ենք այն եզրակացությանը, որ թե՛ Հ. Մորգենթաուն, թե՛ հյուպատոսները ամենևին էլ չեն ձգտել ի նպաստ հայերի ԱՄՆ-ի ռազմական միջամտության: Անհնար է վիճարկել հայոց ցեղասպանությունը կանխելու ԱՄՆ–ի դեսպանի, հյուպատոսների և միսիոներների ցանկությունների անկեղծությունը, բայց նաև չպետք է մոռանալ, որ նրանք հանուն հայերի չպետք է անտեսեին սեփական երկրի քաղաքական շահերը: Նրանք նաև իրենց բազմաթիվ գրություններով հասել են ամերիկյան հասարակության բացասական կարծիքին Թուրքիայի վարած քաղաքականության նկատմամբ, բայց այդ կարծիքը որևէ կերպ չէր կարող կանխել երիտթուրքական ծրագրերը և թերևս այն դերը կարող էր ունենալ, որ նրանց կմղեր գործելառճի առավել գաղտնիության և որքան հնարավոր է տեղեկատվության արգելման:

Իսկապես Մորգենթաուն, հյուպատոսները, միսիոներներն ու այլ ամերիկյան գործիչներ անկեղծորեն ցանկացել են կանխել հայկական ջարդերը, բայց անկախ դրանից նրանք չէին կարող դեմ գնալ ԱՄՆ–ի չեզոքության քաղաքական կուրսին կամ փոխել այն, որը որդեգրել էր իրենց վարչակարգը Թուրքիայի նկատմամբ մինչև 1917թ.-ը: Այս խնդրի լուսաբանումը նույնպես կարևոր ենք համարել:

Ատենախոսության հետապնդած հաջորդ կարևորագույն խնդիրը հանդիսացել է հայ-ամերիկյան փոխհարաբերությունների բացահայտումը 1918–20թթ.–ին: Սա այն ժամանակահատվածն է, որի ընթացքում գոյատևեց Հայաստանի առաջին Հանրապետությունը և այդ գոյատևմանը քիչ չնպաստեցին ամերիկյան մարդասիրական ընկերությունները: Վերջիններիս գործունեությունը վեր հանելով՝ փորձ է արված ապացուցել, որ առանց նրանց

ցուցաբերած մարդասիրական օգնության թերևս դժվար կարողանար սովից և համաճարակներից ելք գտնել հայոց մանուկ պետականությունը: Անդրադառնալով այդ օգնությունը կազմակերպող ընկերությունների գործունեությանը, միաժամանակ ներկայացված են նաև պետության կողմից ստեղծված և Հուվերի գլխավորած նպաստամատույց կազմակերպության գործունեությունը, որը հետագայում կոորդինացնում էր Հասկելը: Թե այդ կազմակերպությունների, թե Հուվերի և Հասկելի գործունեությունն ավելի շատ ունեցել է մարդասիրական նկարագիր, և նրանք գրեթե չեն խառնվել քաղաքական բնույթի խնդիրներին:

Ատենախոսության խնդիրներից է նաև եղել հայ-ամերիկյան քաղաքական հարաբերությունների բացահայտումը, հարաբերություններ, որոնք ի հայտ եկան այն ժամանակ, երբ ԱՄՆ–ը փորձեց ստանձնել Հայաստանի մանդատը: Հարբորդի զեկուցագրի քննարկումից հետո, սակայն, Սենատը ձայների մեծամասնությամբ մերժեց մանդատի ստանձնումը: Վիլսոնը թեև կատարեց իր իրավարար վճիռը՝ գծելով Հայաստանի սահմանները, բայց դա նույնպես այսօրվա հեռավորությունից պետք դիտարկել որպես մարդասիրական քայլ, քանի որ թե նրա և թե բոլոր հասուն քաղաքական գործիչների համար արդեն պարզ էր, որ նման սահմաններով Հայաստան չէր լինելու:

Ատենախոսության հիմնական դրույթները շարադրված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Հակոբյան Ն., Հայ-ամերիկյան հարաբերությունների զարգացման ընթացքը 1830-1890-ական թվականներին, «Ակունք» ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գիտական հոդվածների ժողովածու, թիվ 2, Երևան, 2011, էջ 22-27:

2. Հակոբյան Ն., Ամերիկյան հայանպաստ հասարակական կազմակերպությունների ստեղծումը և գործունեությունը 1915-1916թթ., «Ակունք», ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գիտական հոդվածների ժողովածու, թիվ 1(4), Երևան, 2012, էջ 47-51:

3. Հակոբյան Ն., Հայ - Ամերիկյան հարաբերությունների քաղաքականությունից, ՀՀ անկախության 20-ամյակին նվիրված «Ազգ, պետություն, հայրենիք, պետականության գաղափարը» երիտասարդ գիտնականների միջազգային գիտաժողովի (2011թ. Նոյեմբերի 6-8, Ծաղկաձոր) հոդվածների ժողովածու, Երևան, 2012, էջ 98-103:

4. Հակոբյան Ն.,Մերձավոր Արևելքի ամերիկյան նպաստամատույց կոմիտեի և Հ. Հուվերի Ամերիկյան նպաստամատույց վարչության հայանպաստ գործունեությունը, Հայագիտական հանդես N 1-2 (21-22), Երևան, 2013, էջ 247-256:

5. Հակոբյան Ն., Հայաստանի Հանրապետությունում Հասկելի ծավալած գործունեության հիմնական ուղղվածությունները, Հայագիտական հանդես N 3-4 (23-24), Երևան, 2013, 257-261:

АКОПЯН НОРАЙР ЭДИКОВИЧ

АРМЯНО-АМЕРИКАНСКИЕ ОТНОШЕНИЯ В 1914-1920 ГОДАХ

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.01 «История Армении».

Защита состоится 12-ого мая 2015 г., в 14^{00} ч. на заседании специализированного совета по Истории Армении 004 ВАК РА при Институте Истории НАН РА (0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4).

РЕЗЮМЕ

В диссертации исследуется ход истории развития армяно-американских взаимоотношений в 1914-1920гг. Они представлены в 2 этапа: 1) армяно-американские взаимоотношения в 1914-1916 годах; 2) армяно-американские взаимоотношения в 1918-1920 годах.

Диссертация состоит из введения, трех глав, заключения и списка использованных источников литературы.

В введении обоснована актуальность темы, цели и задачи работы, доказана научная новизна диссертационного исследования и его практическое применение, так же указаны методологические основы проекта, уровень изученности темы, освещены основные литературные теории по данной теме.

В первой главе, названной «Армяно-американские отношения в 1914-1916 годах» рассказывается о зарождении армяно-американских отношений, которые возникали в достаточно сложный для армянского народа период времен, при котором он был лишен государственности, а миссия организаций США, носившая образовательный, благотворительный и религиозный характер, не получала одобрения со стороны представителей руководства исламской Турции.

Представлен анализ деятельности посла США в Османской империи М. Моргентауна, консулов, миссионеров и организаций, направленной на оказание помощи армянам.

Во второй главе «Армяно-американские взаимоотношения в 1918-1920 годах» постарались освятить армяно-американские взаимоотношения в 1918-1920 годах, это период времени, когда выжило первое армянское государство и этому выживанию немало содействовали американские гуманитарные организации. Анализ деятельности последних дает право утверждать, что без оказанной ими гуманитарной помощи, молодому армянскому государству сложно было бы бороться с голодом и эпидемиями. Возвращаясь к помощи, организованной компаниями, одновременно представлена и деятельность созданной государством организации, во главе с Гувером, которую впоследствии координировал Аскель. И деятельность данной организации, и деятельность Гувера и Аскеля носила скорее гуманитарный характер и почти не имела отношения к политическим вопросам.

Третья глава «Неудача в попытке принятия мандата на Армению со стороны США», полностью повещена деятельности США, направленной на принятие армянского мандата, ее провал, причины и связанные с ней последствия. Исследуемые армяно-американские политические отношения, возникли в тот период времени, когда США пыталось принять армянский мандат. Но после обсуждения доклада Арборта Сенат большинством голосов отклонил его принятие. Но, не смотря на это, Вильсон исполнил свое арбитражное решение, расчертив границы Армении, однако даже сегодня эту деятельность нужно рассматривать исключительно как гуманитарный шаг, поскольку и для него и для иных зрелых политических деятелей было понятно, что Армении с подобными границами не может быть.

Диссертация дает новую историческую оценку армяно-американским связям, предмету ее исследования в данный период.

С обнаружением многочисленных новых документов предпринята попытка доказать глубокие цели миссионерского движения, обосновать, что основой даных взаимоотношений являлись стремления преимущественно гуманитарного характера.

А они в свою очередь не могли способствовать быстрому вмешательству в пользу Армении и армянского народа, так как данное вмешательство не являлось политически выгодным для США.

В заключении выделены те основные взгляды, которые, по средствам обобщения данных, рассмотрены и обоснованы в диссертации.

HAKOBYAN NORAYR EDIK

ARMENIAN-AMERICAN RELATIONS IN 1914-1920 YEARS

Dissertation for the degree of Doctor of History on the specialization of "History of Armenia" 07.00.01.

The defense of the dissertation will be held on May 12, 2015, 14^{00} at the session of the Specialized Council 004 on Armenian History of SQC RA by the Institute of History of the National Academy of Sciences of RA (0019, Yerevan, Marshal Baghramyan Ave 24/4).

SUMMARY

The thesis explores the history, the course of development of the Armenian-American relations in 1914-1920. They are divided into two phases: 1) the Armenian-American relations in 1914-1916; 2) the Armenian-American relations in 1918-1920.

The thesis consists of an introduction, three chapters, conclusion and list of used literature sources.

In the introduction grounded the actuality of the theme, purpose and objectives of work, proved scientific novelty of the dissertation research and its practical application, as well specified methodological foundations of the project, the level of studied topics,covered main literary theory on this topic.

In the first chapter, entitled " Armenian-American relations in 1914-1916 years", explains the origin of the Armenian-American relations, which occurred in a rather complicated situation for the Armenian people during the times in which he was deprived of statehood, and mission organizations in the US, bearing educational, charitable and religious character, has not received the approval of the senior representatives of Islamic Turkey.

Represented analysis of the activities of the US Ambassador to the Ottoman Empire M. Morgentaura, consuls, missionaries and other organizations, aimed at helping Armenians.

In the second chapter, "The Armenian-American relations in 1918-1920" tried to consecrate the Armenian-American relations in 1918-1920, it is a period of time survived the first Armenian state and this is contributed to the survival of not a few American humanitarian organizations. Analysis of recent activity gives the right to assert that without support of humanitarian aid, a young Armenian state would be difficult to deal with hunger and epidemics. Returning to aid, organized by the companies at the same time represented the activities, establishing a state organization, headed by Hoover, which Askel later coordinated. And the activities of the given organization and activities

of the Hoover and Askel was rather humanitarian nature and had almost no relation to political issues.

The third chapter, "The failure to attempt the adoption of a mandate for Armenia from the US" entirely devoted to the activities of the United States aimed at the adoption of the Armenian mandate, its failure, causes and consequences associated with it. Investigated Armenian-American political relations emerged in that period of time when the US was trying to take the Armenian mandate. But after discussing the report Arborta, Senate with the help of many votes rejected its adoption. But despite this, Wilson kept his arbitration, marking the borders of Armenia,but even today, this activity should be considered only as a humanitarian step, because for him and for other mature politicians was clear that Armenia can not be with similar boundaries.

Thesis gives new historical value of the Armenian-American relations, the subject of her research in a given period.

With the discovery of many new documents, it`s attempted to prove the deep purpose of the missionary movement, to prove that the basis of the given relationship is mostly aspiration of humanitarian nature.

And, in turn, they could not contribute to the rapid intervention in favor of Armenia and the Armenian people, as the given intervention is not politically profitable for the United States.

In conclusion, it is highlighted those main views which by means of summarizing data reviewed and substantiated in the thesis.